Պատմության օլիմպիադայի հանրապետական փուլ (2024-2025 ուստարի)

11-րդ դասարան (տևողությունը՝ 180 րոպե)

ա) Հայոց պատմություն *(20 միավոր)*

1. Ե՞րբ է Մահտեսի Շահմուրատը ժամանել Փարիզ: 0,5 մ.
   ա) 1663 թ. բ) 1666 թ. գ) 1669 թ. դ) 1672 թ.
2. Ո՞վ է հիմնադրել Սկևռայի դպրոցը: 0,5 մ.
   ա) Վահրամ Ռաբունին գ) Գրիգոր Մագիստրոսը
   բ) Ներսես Մշեցին դ) Ներսես Լամբրոնացին
3. Որտե՞ղ է հաստատվել Հայոց կաթողիկոսությունը 1151 թ.: 0,5 մ.
   ա) Հռոմկլա բ) Սիս գ) Աղթամար դ) Արգինա
4. Թվարկված մտավորականներից ո՞վ չի հանդիսացել 1826-1828 թթ. ռուս–պարսկական պատերազմի օրերին ռուսական արքունիք ներկայացված Հայաստանի ազատագրության նախագծի հեղինակ. 0,5 մ.
   ա) Խաչատուր Լազարյանը գ) Հովհաննես Լազարյանը
   բ) Կարապետ Արղությանը դ) Ալեքսանդր Խուդաբաշյանը
5. Ե՞րբ են ռուսական զորքերը գրավել Ախալցխան. 0,5 մ.
   ա) 1828 թ. հունիսի 23–ին գ) 1828 թ. հուլիսի 24–ին
   բ) 1828 թ. հուլիսի 23–ին դ) 1828 թ. օգոստոսի 15–ին
6. Որքա՞ն էր 1910 թ. տվյալներով Կարսի բնակչության մոտավոր թվաքանակը.
   ա) 30 հազար բ) 32 հազար գ) 35 հազար դ) 42 հազար 0,5 մ
7. Աբգար դպիր Թոխաթեցին որտե՞ղ է կազմակերպել «Ս.Ժամագիրք-պատարագամատույց», «Տօնացույց», «Տաղարան» գրքերի հրատարակումը: 0,5 մ.
   ա) Հռոմ բ) Վենետիկ գ) Կոստանդնուպոլիս դ) Ամստերդամ
8. Որտե՞ղ է ծնվել Հրայր Դժոխքը. 0,5 մ.
   ա) Խլաթի Սոխորդ գյուղում բ) Սասունի Ահարոնք գյուղում
   գ) Սասունի Կոռթեր գյուղում դ) Սասունի Մկդենք գյուղում
9. Ե՞րբ է Փարիզում տեղի ունեցել Օսմանյան կայսրության ընդդիմադիր ուժերի երկրորդ համաժողովը (նշե՛ք տարեթիվը և ամիսը): 0,5 մ.
10. Ե՞րբ է Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ն Կովկասի փոխարքա Ի. Վորոնցով-Դաշկովի միջոցով դիմել ռուսական կայսրին՝ հայերին պաշտպանելու խնդրանքով (նշե՛ք տարեթիվը, ամիսը, ամսաթիվը): 0,5 մ.
11. Ո՞ր քաղաքում է հիմնադրվել Հայ սահմանադրական ռամկավար կուսակցությունը: 0,5 մ.
12. Ո՞վ է ընտրվել 1906 թ. օգոստոսին Սբ. Էջմիածնում հրավիրված պատգամավորական Կենտրոնական ժողովի նախագահ: 0,5 մ.
13. Դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ. 1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)
    ա) Կովկասի փոխարքայության վերափոխվելը կառավարչապետության
    բ) «Մշակ» թերթի հիմնադրումը Գրիգոր Արծրունու կողմից
    գ) «Հայաստան» անվան գործածության արգելքը օսմանյան կառավարության կողմից
    դ) «Դրոշակ» թերթի անդրանիկ համարի հրատարակումը
    ե) «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության հիմնադրումը
    զ) Երևանի նահանգի տրոհումը յոթ գավառների
    է) Թիֆլիս-Ալեքսանդրապոլ-Կարս երկաթուղու գործարումը
    ը) Արևմտահայերի ազգային սահմանադրության վավերացումը օսմանյան սուլթանի կողմից
    թ) 19-րդ դարի ռուս-թուրքական 2-րդ պատերազմի ավարտը

1	2	3	4	5	6	7	8	9

14. Կազմե՛ք համապատասխան զույգեր. 1,5 մ. (6 X 0,25 մ.)

1. Վարդան
2. Քեռի
3. Մեծն Մուրադ
4. Վարդգես
5. Փարամազ
6. Գարուն Աղասի

ա. Հովհաննես Սերենկուլյան
բ. Մատթեոս Սարգսյան
գ. Համբարձում Պոյաճյան
դ. Սարգիս Մեհրաբյան
ե. Կարապետ Թուր-Սարգսյան
զ. Արշակ Գավաֆյան

1	2	3	4	5	6

15. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա) Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքարանի 1876 թ. տվյալներով՝ Օսմանյան կայսրությունում ապրում էր երեք միլիոն հայ, որից երկու միլիոնը՝ Արևմտյան Հայաստանում:

բ) Արևմտյան Հայաստանում 19-րդ դարի երկրորդ կեսին ապրում էին նաև քրդեր, թուրքեր, ասորիներ, հույներ, չերքեզներ և այլն. նրանցից քանակությամբ երկրորդը թուրքերն էին, իսկ երրորդը՝ քրդերը:

գ) 19-րդ դարի 50-70-ական թթ. գոյություն ունեցող բազմապիսի ուղղությունների մեջ հստակորեն զանազանվում էին պահպանողական և ազատական (լիբերալ) հոսանքները:

դ) 1880-1890-ական թթ. հայ ազատական միտքը նոր բարձրության է հասել Մատթեոս Մամուրյանի, Գրիգոր Արծրունու, պատմաբաններ Ա.Պալասանյանի, Ա.Երիցյանի, գրող Ծերենցի և ուրիշների շնորհիվ:

ե) Կ. Պոլսում ռուսական դեսպանության թարգմանիչ Անդրեյ Մանդելշտամի կազմած բարենորոգումների նախագծի համաձայն՝ հայկական վեց նահանգներից կազմվելու էր մեկ նահանգ, որի գերագույն կառավարիչը պետք է լիներ սուլթանի կողմից նշանակվող թուրքահպատակ քրիստոնյա կամ մահմեդական:

զ) Վեց տերությունների դեսպանների մասնակցությամբ 1913 թ. հուլիսի 30-ին Կ. Պոլսում սկսվել է համաժողով, սակայն հայկական հարցի քննարկումը զուգադիպել է Բալկաններում ծագած նոր ճգնաժամին՝ սկսվել էր Բալկանյան երկրորդ պատերազմը:

է) 1914 թ. հունվարի 26-ին Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի միջնորդությամբ ստորագրվել է Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու վերաբերյալ ռուս-թուրքական համաձայնագիրը:

ը) Ըստ 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագրի՝ յոթ նահանգներից ձևավորվելու էր երկու վարչական միավոր՝ 1) Էրզրում, Տրապիզոն, Սեբաստիա և 2) Վան, Բիթլիս, Խարբերդ, Դիարբեքիր:

թ) Հայ ազգային կուսակցությունները հիմնականում հավանություն են տվել 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագրի դրույթներին:

1	2	3

16. Ընտրե՛ք տերմինների 2 ճիշտ բացատրությունները: 1 մ. (2 X 0,5 մ.)

ա) Հին Հայաստանում պաշտամունքային ծառերն ունեցել են իրենց հատուկ նվիրական օրը՝ Ծաղկազարդը, իսկ ջուրն ու ծաղիկները՝ իրենց տոնը՝ Վարդավառը (ժողովրդական լեզվում՝ Ծաղկամոր տոն):

բ) Արա Գեղեցիկի և Շամիրամի առասպելը այնպիսի լայն տարածում է ունեցել, որ նրա որոշ հատվածներ արտացոլվել են նաև անտիկ հեղինակների երկերում, մասնավորապես՝ Պլատոնի «Խնջույք» աշխատությունում:

գ) Հայկական հելլենիզմի պատմությունը բաժանում են երկու փուլի. երկրորդ փուլն ընդգրկում է մեր թվարկության 4-5-րդ դարերը և ընդունված է համարել «ուշ հելլենիզմի» ժամանակաշրջան:
դ) Պատմության ընթացքում «հեթանոս» բառը տարբեր նշանակություն է ունեցել. հին հայոց հավատքի և քրիստոնեական սկզբնական շրջանի առումով «հեթանոս» նշանակում էր «ցեղ», «ազգ», միջնադարում՝ «ոչ քրիստոնյա», «այլակրոն»:
ե) 13-14-րդ դարերում Հայաստան մուտք գործած ցեղախմբերը միմյանց դեմ պայքարում ստիպված էին լինում համագործակցելու հայ իշխանական տների հետ և իրենց ներկայացնելու որպես «Հայաստանի թագավոր» (Շահ-ի Արման):
զ) 1917 թ. նոյեմբերին Թիֆլիսում գումարվել է Անդրկովկասի քաղաքական ու ռազմական ուժերի ներկայացուցիչների խորհրդակցություն. նոյեմբերի 15-ին կազմավորվել է գործադիր նոր մարմին, որը կոչվել է Անդրկովկասյան հատուկ կոմիտե:
է) 1917 թ. դեկտեմբերին Արևմտահայ խորհուրդը որոշում է կայացրել ձևավորել արևմտահայ զորաբաժին (դիվիզիա). այդ գործի համար ստեղծվել է գործադիր նոր մարմին՝ Հայաստանի զինվորական խորհուրդը:
ը) 1918 թ. մարտի 1-ին Հայկական կորպուսի և արևմտահայ զինուժի միավորմամբ ստեղծվել է Հայկական առանձին հարվածային զորամաս՝ Թովմաս Նազարբեկյանի հրամանատարությամբ:

1	2

17. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 սխալ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
ա) 1441 թ. Թովմա Մեծոփեցու և Հովհաննես Հերմոնեցու նախաձեռնությամբ Սբ. Էջմիածնում գումարվում է մեծ ժողով, որին մասնակցում էին Հայոց եկեղեցու շատ ներկայացուցիչներ:
բ) Այրարատյան նահանգի կառավարիչ Յաղուբ բեկը, որը կատարում էր «Շահ-ի Արման» Կարա-Յուսուֆի կարգադրությունը, նպաստավոր պայմաններ է ստեղծում Սբ. Էջմիածնում գումարված ժողովականների համար:
գ) 1441 թ. Սբ. Էջմիածնում գումարված ժողովը Հայոց կաթողիկոս է ընտրում Հովհաննես Հերմոնեցուն:
դ) 1465 թ. Աղթամարի Սբ. Խաչ եկեղեցում հանդիսավորությամբ հայոց թագավոր է օծվում Սմբատ Արծրունին:
ե) Հայկական առաջին տպարանն Ամստերդամ քաղաքում հիմնել է Մատթեոս Ծարեցին. նա Հայոց կաթողիկոսի պատվիրակն էր և ուղարկվել էր տպագրության գործը կազմակերպելու:
զ) Մատթեոս Ծարեցու գործը շարունակել է ժամանակի նշանավոր մտավորականներից Աբգար դպիր Թոխաթեցին:
է) Մադրասի խմբակի անդամները կազմում և 1773 թ. հրատարակում են «Որոգայթ փառաց» գիրքը, որն ապագա հայկական պետության կառավարման օրենքների ժողովածու էր:
ը) Հայոց ապագա պետության բարձրագույն օրենսդիր մարմինը, համաձայն «Որոգայթ փառաց»-ի, պետք է կազմվեր ժողովրդի կողմից ընտրված փոխանորդներից (պատգամավորներից):
թ) Հայոց կաթողիկոսի հոգևոր հեղինակությունն ու աշխարհիկ իրավասություններն ընդունում էին նաև օտար գահակալները՝ մեծարելով նրան «խալիֆա» անվանումով:

1	2	3

18. Գտե՛ք, նշե՛ք և ուղղե՛ք սխալը. 1 մ. (2 X 0,5 մ.)
Կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատար գեներալ Ավերյանովի՝ 1917 թ. դեկտեմբերի 7-ի գաղտնի հրամանի համաձայն՝ Թուրքիայից նվաճված մարզերի հայ բնակչությունից սկսեցին կազմավորել չորս հրաձգային գնդեր:

19. Կարդացե՛ք սկզբնաղբյուրից մեջբերումը և պատասխանե՛ք հարցերին. 1,5 մ. (3 X 0,5 մ.)

«Թեև ամենքն էլ մեղանչում ու սխալվում են ոչ առանց վնասի ու հատուցման, սակայն ոչ այնպես, ինչպես տերերը, իշխաններն ու ազգի նահապետները, բանն այն է, որ եթե հասարակ ժողովրդից որևէ մեկը սխալվում կամ մեղանչում է, ապա միայն իրեն է վնաս բերում, իսկ իշխանի սխալվելը ոչ միայն վնասներ, այլև երբեմն մեծամեծ պատուհասներ ու աշխարհավերություններ է բերում ամբողջ ազգին ...»:

ա. Ո՞ր գրքից է կատարված մեջբերումը:
բ. Որտե՞ղ է այն հրատարակվել:
գ. Ո՞վ է գրքի հեղինակը:

20. Լրացրե՛ք տեքստում բաց թողնված հատվածները. 1,5 մ. (3 X 0,5 մ.)
Վանի ինքնապաշտպանությունն սկսվել է 1915 թ. ապրիլի 7-ին և տևել մոտ ... (1) ամիս: Այգեստան թաղամասում ստեղծվել է զինվորական մարմին, որը ղեկավարում էր ... ... -ը (2): Վանի ինքնապաշտպանության ընդհանուր կազմակերպիչը և ոգեշնչողը ... ...-ն (3) էր, ով հետագայում ռուսական բանակի հրամանատարության կողմից նշանակվում է Վանի և ազատագրված շրջանների նահանգապետ:

21. Տրամաբանական խնդիր. *Եթե Հայկական լեռնաշխարհում հնագիտական պեղումներից հայտնաբերված իրը 12400 տարեկան է, քարի դարի կոնկրետ ո՞ր պարբերափուլի (ժամանակաշրջանի) ընթացքում է ստեղծվել:* 1 մ.

22. Աշխատանք Մեծ Հայքի ուրվագծային քարտեզի հետ. 1 մ. (2 X 0,5 մ.)
ա. Ո՞ր աշխարհն (նահանգն) է գունանշված:
բ. Ո՞ր գետով է անցնում նրա հարավային սահմանը:

23. Ամենայն Հայոց ո՞ր Կաթողիկոսն է պատկերված լուսանկարում. 0,5 մ.

24. Աշխատանք ծաղրանկարի հետ (պատասխանե՛ք հարցերին). 1 մ. (2 X 0,5 մ.)

ա. Օսմանյան կայսրության պարագլուխներից ո՞ւմ է խորհրդանշում ծաղրանկարը:

բ. Հայ ո՞ր գործչի գործողության արդյունքում է նա սպանվել:

բ) Համաշխարհային պատմություն *(10 միավոր)*

1. Ո՞ր փարավոնն է գրավել Ավարիսը և վտարել հիքսոսներին. 0,5 մ.

   ա) Թութմոս III բ) Ամենհոտեպ IV գ) Յահմոս I դ) Ռամզես II

2. Պարսից ո՞ր արքան է գրավել Բաբելոնը. 0,5 մ.

   ա) Դարեհ I բ) Կյուրոս II Մեծ գ) Քսերքսես I դ) Արտաքսերքսես II

3. Ե՞րբ է Ճապոնիայում հաստատվել Տոկուգավայի սյոգունությունը. 0,5 մ.

   ա) 1573 թ. բ) 1603 թ. գ) 1612 թ. դ) 1625 թ.

4. Ո՞վ էր քաղաքական կատակերգության հեղինակը Հին Հունաստանում. 0,5 մ.

   ա) Էսքիլես բ) Սոֆոկլես գ) Արիստոֆանես դ) Էվրիպիդես

5. Ինչպե՞ս էր կոչվում պառլամենտի ընդունած և Հենրիխ VIII-ի ստորագրած փաստաթուղթը, որով անգլիական եկեղեցու գլուխ կանգնում է թագավորը: 0,5 մ.

6. Համապատասխանեցրե՛ք. 1 մ. (4 X 0,25 մ.)

   1. Ֆ.Շուբերտ 2. Է.Պո 3. Գ.Ֆլոբեր 4. Ռ.Վագներ

   ա. Ֆրանսիա բ. Ավստրիա գ. Գերմանիա դ. ԱՄՆ

1	2	3	4

7. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)

   ա) 1215 թ. Չինգիզ խանը գրավել է Պեկին քաղաքը և դարձրել մոնղոլական տերության մայրաքաղաքը:

   բ) Չինաստանում սկսված հակամոնղոլական շարժումը գլխավորում էր կրոնավոր Չժու Յուան-չժանը (Տայցու). 1368 թ. ապստամբները գրավել են Պեկինը, Տայցուն իրեն հռչակել է կայսր և դարձել Մին հարստության հիմնադիրը:

գ) Ինկերի պետությունը իր հզորության բարձրակետին է հասել Մոնթեսումա II-ի (1502-1520 թթ.) կառավարման տարիներին:
դ) 1594 թ. հուգենոտների առաջնորդ Հենրիխ Բուրբոնն ընդունել է կաթոլիկություն և դարձել Ֆրանսիայի թագավոր. երկրի միասնությունն ամրապնդելու համար Հենրիխ IV-ը 1598 թ. հրապարակել է Նանտի էդիկտը:
ե) 1871 թ. հունվարի 18-ին Բեռլինում՝ Ռայխստագի նիստում, հանդիսավոր կերպով հռչակվել է Գերմանական կայսրության ստեղծումը:
զ) 1861 թ. Իտալիան հռչակվել է թագավորություն. նույն թվականին Հռոմը դարձել է Իտալիայի մայրաքաղաք:
է) 1912 թ. ԱՄՆ-ի նախագահական ընտրությունում հաղթել է Վուդրո Վիլսոնը. նրա բարեփոխումների ծրագիրը հայտնի է «նոր ազգայնականություն» անունով:
ը) Իտալական ֆաշիզմի առաջնորդ (իտալերեն՝ դուչե) Մուսոլինին 1919 թ. հիմնել է «Ֆաշի դի կոմբատիմենտոն» («Մարտական միություն»), որտեղից էլ տարածվեց շարժման անունը:

1	2	3

8. Թվարկե՛ք՝ 2 մ. (4 X 0,5 մ.)
ա. Նացիստական Գերմանիայի կառավարման համակարգում Ա. Հիտլերի մերձավոր համախոհներից 2-ին,
բ. 1940 թ. Բրիտանիան նվաճելու գերմանական ձախողումից հետո Արևելյան Եվրոպայում գերմանամետ վարչակարգ հաստատած պետություններից 2-ը:

9. Աշխատանք ուրվագծային քարտեզի հետ. 1 մ. (2 X 0,5 մ.)



ա. Ո՞ր պետությունն է պատկերված ընդհատվող գծանշերով:
բ. Ո՞րերորդ դարում է այն սկսել ձևավորվել:

10. Ո՞ր թվականին է ստորև պատկերված նշանավոր գործիչն օծվել կայսր. 0,5 մ.

11. Աշխատանք պատմական ծաղրանկարի հետ. 1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա. Ո՞ր պետությունն է ծաղրանկարի կենտրոնում պատկերված կերպարանքը:
բ. Պատմական ո՞ր իրադարձությունն է տեղի ունենում ձախ կողմում պատկերված հավաքական կերպարի (կուսակցության) գործողության արդյունքում:
գ. Ո՞վ է գլխավորել պատմական այդ իրադարձությունը:

Հանրապետական օլիմպիադայի
հանձնաժողովի նախագահ՝

ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի դոցենտ,
պատմ. գիտ. թեկնածու Մ. Մալխասյան

04.03.2025 թ.